# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 071022

ք. Երևան « 06 » հոկտեմբեր» 2022 թ.

«Տահույս» սոցիալ-կրթական ՀԿ-ն, ի դեմս նախագահ Մերի Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից «Առողջապահության նախարարությունը» ի դեմս Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել սույն պայմանագրով նախատեսված կարգով մատուցած ծառայությունների դիմաց:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունը. այն է՝ սույն թվականի հոկտեմբերի 7-ին կազմակերպել Տավուշի թեմի մանկապատանեկան երգչախմբի մասնակցությունը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք «Արագ արձագանքման թիմերի (ԱԱԲԹ/EMT) բարձր մակարդակի 5-րդ եռօրյա գլոբալ հանդիպման փակման հանդիսավոր միջոցառմանը»:

1.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանվում է՝ 2022 թվականի հոկտեմբերի 10-ը:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1. Կատարողը պարտավոր է՝**

2.1.1. Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունը մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով:

**2.2 Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված ծառայության դիմաց:

**2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

**2.4 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.4.1. Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

## 3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով Ծառայության արժեքը կազմում է 1 200 000 (**մեկ միլիոն երկու հարյուր հազար**) ՀՀ դրամ: Վերոնշյալ գումարը ներառում է հարկերը և պարտադիր այլ վճարները:

3.2. Վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունը՝ Հավելված 1, երկկողմանի ստորագրելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:
3.3 Ծառայությունը կհամարվի մատուցված միջոցառմանը երգչախմբի մասնակցության փաստով և վավերացված հանձնման - ընդունման արձանագրությամբ:

## 4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 5. Այլ պայմաններ

5.1.Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:
5.2.Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:
5.4.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:
5.5.Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Առողջապահության նախարարություն» | «Տահույս» սոցիալ-կրթական ՀԿ |
| ՀՎՀՀ՝ 02507171 | ՀՎՀՀ՝ 07623538 |
| Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3 | Գործունեության հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Իջևանյան 5 |
| Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական համապատասխան հաշվեհամարից՝ 900011041218 | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>ՀՀ՝ 220103350215000 |
| Գլխավոր քարտուղար՝ _____ Վ. Գրիգորյան<br>ստորագրություն<br>Կ.Տ. | Նախագահ _____ Մ.Առաքելյան<br>ստորագրություն<br>Կ.Տ. |

GRIGORYAN VARDANUSH 6802780100
Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Дата: 2022.10.11 18:00:54 +04'00'

«ՏԱՀՈՒՅՍ» «TAHUYS» 07623538

*Հավելված 1*
*06 հոկտեմբերի 2022թ.*
*կնքված թիվ 071022 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| «Տահույս» սոցիալ-կրթական ՀԿ<br>Հասցե՝ ք. Իջևան, Իջևանյան 5<br>ՀՀ՝ 220103350215000<br>ՀՎՀՀ՝ 07623538 | «Առողջապահության նախարարություն»<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N 3<br>Հ/Հ ՀՀ ՖՆ գանձապետական հաշվեհամար՝<br>900011041218<br>ՀՎՀՀ՝ 02507171 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« 10 » «հոկտեմբերի» 2022թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ *Տավուշի թեմի մանկապատանեկան երգչախմբի մասնակցությունը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք «Արագ արձագանքման թիմերի (ԱԱԲԹ/EMT) բարձր մակարդակի 5-րդ եռօրյա գլոբալ հանդիպման փակման հանդիսավոր միջոցառմանը»*

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 06 » «հոկտեմբերի» 2022թ.

Պայմանագրի համարը՝ 071022

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «10» «հոկտեմբեր» 2022 թ. դուրս գրված N Բ 1678341933 հաշիվ վավերագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | *Երգչախմբի մասնակցություն* | *Մանկապատանեկան երգչախմբի մասնակցությունը միջոցառման փակման արարողությանը* | 1 | 1 | 07.10.2022թ | 07.10.2022թ. | 1,200.0 | Ըստ պայմանագրի |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |
| Գլխավոր հաշվապահ | Գլխավոր հաշվապահ |
| Դատարան | Դատվիրատու |

GRIGORYAN VARDANUSH 6802780100
Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Дата: 2022.10.11 18:01:20 +04'00'